

հովանեաւ սուրբ յանապատէս որ կոչի Տանձափարախ, յառաջնորդութեամբ սուրբ մենաստանիս տեառն Մովսէսի, որ բարունական գաւազանաւ եւ բարձրագահ իշխանութեամբ տիրէ մերումս ժողովրդեան, ախոյեան յաղթաւ ընդդէմ արիստականացն եւ հերետիկոտաց. պահեսցէ Տէր Աստուած եւ զաւրացուցէ ի կամս իւր. ամէն<sup>15</sup>» :

Այս տողերուն համաձայն են նաեւ Եսայի Կարճաւանեցւոյ խօսքերը, որ նկարագրելով Մովսէս վարդապետի գործունէութիւնը կը գրէր. «որ լուսաւորէ զԱզգս Հայկազեան եւ ժողովեալ կրօնաւորական դասս եւ նորոգ-

<sup>15</sup> Ձեռ. Էջմ. 1678, զրչութեան տարին եւ զրիչն շեն յիշուած: Հ. Ղ. Ալիշան, Միսական, 280, յառաջ բերելով յիշատակարանին մէկ մասը, «ոչ գիտեմ, կ'ըսէ, յառաջ թէ յետ» Մատթէոս վարդապետի, որ ժե. դարու սկիզբը ծաղկեցաւ նոյն Տանձափարախ մենաստանին մէջ, զրուած է: Ինձ կը թուի թէ Յիշատակարանս ժե. դարու երկրորդ տասնեակին կը վերաբերի, եւ զրիչն Մինաս երէց ըլլայ, որուն յատուկ են քերականական անկանոնութիւնները, որոնք կը տեսնուին հոս եւ 1613 եւ 1615 տարիներու յիշատակարաններուն մէջ (հմտ. էջ 25—26): — Տանձափարախի տեղական «առաջնորդն» էր քիչ յետոյ Արիստակէս Վ. Բարկուշատցի, որ եւ «անդ եկաց մինչեւ ցլախճան կենաց իւրոց եւ անդէն թաղեցաւ» (Դարբ. 253): 1629ին կը յիշէ զինքը Սարգիս զրիչ իբրեւ «Հայր անապատին Տանձափարախոյ» (տե'ս ծան. 11). Իսկ ուրիշ զրիչ մը 1624ին կը գրէր թէ «ի պն տարին ծաղկեցաւ, որ սեղանատեղն շինել ետ Ընքստակէս վարդապետն, որ առաջնորդ էր Անապատին», Աճառեան, Յուցակ Թաւրիզի, էջ 114: Կ'երեւայ թէ Մովսէս վարդապետ, 1618/20 շրջանին ժամանակ մը ստանձնած էր Տանձափարախի վերանորոգուած մենաստանին առաջնորդութիւնը. զոր ապա յանձնած է իւր աշակերտին՝ Արիստակէս վարդապետին: